ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2023 թվականի N 660 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 1467-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի «Հատուկ նշանակության տրանսպորտային միջոցների ուղեկցման և էսկորտ ուղեկցման, ավտոտրանսպորտային շարասյուների անվտանգ երթևեկության ապահովման կարգը հաստատելու մասին» N 1467-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին հավելվածում՝

ա. 2-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա) **հատուկ նշանակության տրանսպորտային միջոցներ՝** տրանսպորտային միջոցներ, որոնցով երթևեկում են Հանրապետության նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի նախագահը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, վարչապետի թեկնածուն, Հանրապետության պաշտոնաթող նախագահը, պաշտոնաթող վարչապետը, Հայաստանի Հանրապետություն ժամանած օտարերկրյա

պետությունների, կառավարությունների, օրենսդիր մարմինների և արտաքին հարաբերությունների գերատեսչությունների ղեկավարները, նրանց ուղեկցող անձինք և հատուկ պետական պաշտպանության ենթակա այլ անձինք, ինչպես նաև ուղեկցման ընթացքում պետական պահպանության իրականացումն ապահովող անձինք.»,

բ. 9-րդ կետում «պետական պահպանության ծառայության պետի հրամանով» բառերը փոխարինել «պահպանության ծառայության պետի կամ նրան փոխարինող անձի հրամանով (հանձնարարությամբ)» բառերով,

գ. 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«28. Հատուկ նշանակության տրանսպորտային միջոցների ուղեկցման և էսկորտ ուղեկցման ընթացքում երթևեկության արագությունն ընտրվում է շքախմբի (կորտեժի) պատասխանատու ղեկավարի որոշմամբ՝ հաշվի առնելով ճանապարհային պայմաններն ու անվտանգության ապահովման հանգամանքները, և այն չպետք է գերազանցի՝ բնակավայրերում՝ 100 կմ/ժ-ը, բնակավայրերից դուրս՝ 120 կմ/ժ-ը՝ բացառությամբ հատուկ նշանակության տրանսպորտային միջոցներով երթևեկող անձանց կամ անվտանգությունն ապահովելու նպատակով ուղեկցման և էսկորտ ուղեկցման համար ներգրավված ավտոմոբիլներով և մոտոցիկլետներով երթևեկող անձանց վրա հարձակման կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքերի: Տեղանքի բարձր ռելիեֆի և ճանապարհային անբարենպաստ պայմանների ժամանակ երթևեկության արագությունը կարող է նվազեցվել շքախմբի (կորտեժի) պատասխանատու ղեկավարի որոշմամբ:»,

դ. 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«30. Հատուկ նշանակության տրանսպորտային միջոցների ուղեկցման և էսկորտ ուղեկցման ժամանակ հատուկ նշանակության տրանսպորտային միջոցների, ուղեկցման և էսկորտ ուղեկցման համար ներգրավված ավտոմոբիլների և մոտոցիկլետների վարորդները պատասխանատու են երթևեկության անվտանգության, այդ թվում՝ սահմանված արագության պահպանման համար:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

04.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ